ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ
ՁԵՐԲԱԿԱԼՎԱԾ ԱՆՁԱՆՑ ՊԱՀԵԼՈՒ ՎԱՅՐԵՐՈՒՄ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ
ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԴԻՏՈՐԴԱԿԱՆ ԽՈՒՄԲ

№ 2621/1475 20.10.2014թվ.

ՀՀ Ոստիկանության պետ,
գեներալ-լեյտենանտ
պարոն՝ Վ. Գասպարյանին

ՀՀ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ
ՄՈՒՏՔ
8201
22 10 2014 թ.

ՀՀ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՇՏԱԲ
ՄՈՒՏՔ № 4214
22 10 14

Հարգելի պարոն Գասպարյան,

Դիտորդական խումբը սույն թվականի հոկտեմբեր ամսին այցելություն կատարելով ՀՀ ոստիկանության Շիրակի ՄՎ Ախուրյանի ՁՊՎ, արձանագրել էր մի շարք թերություններ և խախտումներ:

Թերություններ՝

1. Երրորդ խցի պատուհանի ապակիները կոտրված էին և խցում ցուրտ էր: / *կից ներկայացվում է լուսանկար – 1 /*
2. Ճաշասենյակում վարդակը գտնվում էր բաց վիճակում և օգտագործվում էր այդպես: / *կից ներկայացվում է լուսանկար – 2 /*
3. Ախտահանման նպատակով ՁՊՎ-ին տրամադրված քլորը պարկով, բաց վիճակում դրված էր քննչական սենյակում, որը իր հերթին արտանետում է գազեր, և հնարավոր չէր տվյալ սենյակում աշխատանքներ կազմակերպել: / *կից ներկայացվում է լուսանկար – 3 /*
4. Քլորը սանհանգույցում օգտագործվում էր հենց չոր վիճակում, որը անթույլատրելի է և վնասակար է թե ՁՊՎ-ում պահվող և թե ծառայություն իրականացնող ոստիկանների առողջության համար: / *կից ներկայացվում է լուսանկար – 4/*
5. Ճաշասենյակում կրկին բացակայում էր աման լվանալու հեղուկը, որին ի մեկնաբանություն, հերթապահ մասի պետը հայտնեց, որ մաքրարարը այն պահում է: Ավելին՝ մաքրարարը երբ այցելեց ՁՊՎ, Դիտորդական խմբին տրամադրեց իր պահածը, ոչ թե աման լվանալու հեղուկ, այլ լվացքի փոշի, մեկնաբանելով թե ինչ տարբերություն:

ՀՀ ք.Երևան 0002,Դեմիրճյան 29-1ա Հեռ./ֆաքս: (+374 10) 56 87 42
www.policemonitoring.org E-mail: info@policemonitoring.org

6. ՁՊՎ-ի սպասքը գտնվում էր համապատասխան պահարանում՝ փոշին վրան, որը վկայում էր որ չի օգտագործվում, այն դեպքում, երբ այցելության պահին ՁՊՎ-ում պահվում էին երկու ձերբակալված և անհասկանալի էր, թե նրանց ինչով էր սնունդ տրամադրվել:

Խախտումներ՝

1. Սույն թվականի օգոստոսի 14-ին թիվ 2621/1443 գրությամբ Դիտորդական խումբը ՀՀ ոստիկանությանը իրազեկել էր, ՀՀ ոստիկանության Շիրակի ՄՎ Ախուրյանի ՁՊՎ-ում բժիշկների կողմից չկատարվող բուժզննության հիմնախնդրի վերաբերյալ: ՀՀ ոստիկանության կողմից 03.09.2014թ-ին թիվ 2/2-1-2132 գրությամբ տրվել էր մեկնաբնություն, որ կատարվել է քայլեր հիմնախնդիրը լուծելու ուղղությամբ: Այն է՝ Շիրակի մարպետարանի կողմից Ախուրյանի բժշկական կենտրոնի և Գյումրիի շտապ բուժօգնության կայանի տնօրենները իրազեկվել են և ըստ համապատասխան ժամերի ՀՀ ոստիկանության Ախուրյանի բաժնի ՁՊՎ անհրաժեշտության դեպքում կայցելեն բժիշկները և կկատարեն անհարժեշտ գործառույթը:

   Այսպիսով՝ տեղեկացնենք, որ նշված գործառույթը կատարվում է մասնակի, որը արդյունավետ չէ: Հրավիրված բժիշկը այցելում է ՁՊՎ, բայց արձանագրված մարմնական վնասվածքները հրաժարվում է գրանցել <<Ձերբակալված անձանց բուժզննության և բուժօգնության>> գրանցամատյանում: Օրինակ՝ 19.09.2014թ-ին ժամը նշված չէ, Հովհաննես Աշոտի Մանուկյանի մարմնական վնասվածքների համար հրավիրվել է շտապ օգնություն: Հրավիրված բժիշկ՝ Ղազարյանը համապատասխան բուժմատյանում մարմնական վնասվածքների վերաբերյալ լրացում չի կատարել, հրաժարվել է: Բայց հերթապահ մասի պետը մարմնական վնասվածքների վերաբերյալ իրազեկում է ներկայացրել վարույթն իրականացնող մարմնին:
2. Հովհաննես Աշոտի Մանուկյանը 19.09.2014թ-ին ժամը 13.30-ին ձերբակալվել է: ՁՊՎ է ընդունվել ժամը 17.55-ին: 22.09.2014թ-ին տեղափոխվել է ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան՝ խափանման միջոցը քննարկելու նպատակով: Բայց մինչ Դիտորդական այցելության օրը ՁՊՎ-ում չկար ոչ մի ինֆորմացիա, նրա ՁՊՎ ետ վերադարձի, ազատ արձակելու կամ ՔԿՀ տեղափոխելու վերաբերյալ: Նմանատիպ դեպք ՁՊՎ-ում 3-ն էին, որոնց վերաբերյալ հերթապահ մասի պետը մեկնաբանեց, որ երեքն էլ տեղափոխվել են ՔԿՀ, բայց որոշումները չեն ներկայացվել ՁՊՎ:

Խնդրում ենք ուսումնասիրել փաստերը և տալ մեկնաբանություն ներկայացվածի վերաբերյալ:

Հարգանքով՝

ՀՀ ոստիկանության համակարգի ձերբակալված անձանց պահելու վայրերում վերահսկողություն իրականացնող հասարակական Դիտորդական խմբի նախագահ՝ Հ. Սահակյան

ՀՀ ք.Երևան 0002,Դեմիրճյան 29-1ա
Հեռ./ֆաքս: (+374 10) 56 87 42
www.policemonitoring.org
E-mail: info@policemonitoring.org

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՇՏԱԲ

375025, ք. Երեւան, Նալբանդյան 130 հեռ. 59-65-94

N 2/2-1-2871 << 07 >> 11 2014թ.

Ձեր 20.10.2014թ. թիվ 2621/1475 գր.

ՀՀ ոստիկանության համակարգի ձերբակալվածներին պահելու վայրերում հասարակական դիտորդների խմբի նախագահ՝

տիկին Հ. Սահակյանին

Հարգելի տիկին Սահակյան

Հայտնվում է, որ դիտորդների խմբի կողմից ս/թ հոկտեմբեր ամսին ՀՀ ոստիկանության Շիրակի մարզային վարչության Ախուրյանի բաժնի ձերբակալվածներին պահելու վայր կատարած այցելության ընթացքում արձանագրված թերություններն ու խախտումներն ուսումնասիրվել են ՀՀ ոստիկանության շտաբում և Շիրակի մարզային վարչությունում:

1-6. ՀՀ ոստիկանության Շիրակի մարզային վարչության կողմից տրամադրված տեղեկատվության համաձայն՝ հայտնվում է, որ դիտորդների խմբի հաշվետվության 1-ից 6-րդ կետերում նշված թերությունները տեղում վերացվել են և դրանք հետագայում բացառելու նպատակով՝ համապատասխան ծառայողները նախազգուշացվել են:

7. ՀՀ ոստիկանության Շիրակի մարզային վարչության կողմից պայմանավորվածություն է ձեռք բերվել Շիրակի մարզի առողջապահության բաժնի պետի հետ, որպեսզի այսուհետ ՁՊՎ այցելած բուժաշխատողը ՁՊՎ ընդունված և վնասվածքներ ունեցող անձանց նկատմամբ կատարի մարմնի արտաքին զննություն և համապատասխան գրառումներ՝ <<Ձերբակալված անձանց բուժզննության կամ բուժօգնության>> գրանցամատյանում:

8. ՀՀ ոստիկանության Շիրակի մարզային վարչության համապատասխան գրություններով Շիրակի մարզային ընդհանուր իրավասության դատարանի նախագահից և ՀՀ քննչական կոմիտեի Շիրակի մարզային քննչական վարչությունից խնդրվել է տրամադրել ոստիկանության Ախուրյանի բաժնի ՁՊՎ-ում պահված թվով 3 ձերբակալված անձանց դատական նիստից հետո ՔԿՀ տեղափոխման վերաբերյալ որոշումները:

ՀՀ ոստիկանության շտաբ